ԿԱՐԾԻՔ

Անի Անդրանիկի Սարատիկյանի «Շնող գետի ավազանը երկաթի դարում (ըստ հնագիտական նորահայտ տվյալների)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Թաղման ծեսի ուսումնասիրությունն ինքնին դժվարին և բազմաբովանդակ աշխատանք է, որը ենթադրում է ոչ միայն հնագիտական հիմնահարցերի համալիր ուսումնասիրություն, այլև կիրառվող մեթոդների բազմազանություն: Բացի այդ, թաղման ծեսի հիմնարար ուսումնասիրությունը ենթադրում է միջմասնագիտական մոտեցում: Այս իմաստով քննարկվող աշխատանքի հեղինակի առջև դրված էր բարդ խնդիր, որը հաջողվեց հիմնականում լուծել: Հատկանշական է, որ լրջագույն այս հետազոտությունն իրականացվել է մեկ հուշարձանախմբի՝ Շնողի ավազանի դամբարանադաշտերի օրինակով:

Ներկայացվող աշխատանքը բաղկացած է երկու հատվածից՝ բուն տեքստը և հավելվածները: Առաջին հատուրը բաղկացած է հիմնական շարադրանքից, գրականության և հապավումների ցանկից: Բուն շարադրանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացություններից: Ներածությունում ներկայացված են աշխատանքի արդիականությունը, որտեղ արժևորվում է թիրախային տարածաշրջանի տեղն ու դերը ժամանակաշրջանի սոցիալ տնտեսական և քաղաքական իրողությունների համատեքստում: Ակնարկ է կատարվում տարածաշրջանի հուշարձանների ուսումնասիրության պատմությանը:

Հեղինակն իրավացիորեն նշում է թիրախային տարածաշրջանի հուշարձանների ուսումնասիրության կարևորությունը, մանաավանդ աշխարհագրական դիրքի և հումքային ռեսուրսների տեսակետից: Բացի այդ ամփոփ հուշարձանի հետազոտությունը մեծ կարևորություն է ստանում քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական վերափոխումներն ուսումնասիրելու համատեքստում: Այնուհետև ներկայացվում է տարածքի ուսումնասիրության պատմությունը, արժևորելով Ժ. դե Մորգանի և

Վ. Ավետանի գործունեությունը: Մանրամասն անդրադարձ է կատարվում 2009 թ. հետո ծավալված աշխատանքներին:

Հեղինակը ներկայացնում է դամբարանադաշտերը: Աշխատանքը աչքի է ընկնում ուսումնասիրության մեթոդների բազմազանությամբ. վիճակագրական, համեմատական, աաշխարհագրական և այլն:

Առաջին գլխում ներկայացված են դամբարանային համալիրները: Գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից. դամբարանների տարածական և ժամանակագրական դիրքը, կառուցվածքը, թաղման ծեսը: Դամբարանների տեղադրությունը և տեղագրությունը ներկայացնելիս հեղինակը ներկայացնում է տարածքի ջրագրությունը, բնական հարստությունները: Այնուհետև քննության է առնվում դամբարանադաշտերի տեղաբաշխումը տվյալ ամփոփ տարածքում: Աշխատանքի այս մեթոդաբանությունը կիրառվում է դեռևս 1970-ականներից և ապացուցել է իր կենսունակությունը: Կարևոր է նաև, որ հեղինակը չի դիտարկում դամբարանադաշտերը մեկուսացված, այլ որպես միասնական անսամբլ բնակատեղիների հետ: Անդրադառնալով դամբարանների տեղագրությանը հեղինակը դիպուկ դիտարկում է անում, որ դամբարանները տեղադրված են հիմնականում բարձրադիր վայրերում, ապահովելով տարածքի տեսանելիությունը: Կարևոր է հեղինակի այն միտք, որ դամբարանադաշտերի որոշակի տեղագրությունը յուրատեսակ սեփականության իրավունքի ցուցիչ է, ինչը մանավանդ հետաքրքիր է հաշվի առնելով հարուստ հանքային ռեսուրսները:

Այնուհետև հեղինակը ձեռնամուխ է լինում դամբարանադաշտերի ժամանակագրական վերլուծությանը, նշելով թե, որ տարածքում, որ շրջափուլին պատկանող դամբարանները քանի տոկոս են կազմում: Այս ձեռնարկն իրականում ունի մեծ նշանակություն, քանի որ լույս է սփռում տարբեր շրջափուլերում տարածքի յուրացման օրինաչափությունների վրա:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է դամբարանների կառուցվածքին: Հատկանշական է, որ հեղինակը նշում է, որ երբեմն մի քանի դամբարան միավորված է մեկ ցանկապատի շրջանակներում: Այս դիտարկումը շատ կարևոր է դամբարանադաշտերում առանձին հատվածների առաջացման տեսանկյունից: Հեղինակը մանրամասն ներկայացնում է դամբարանների չափերը, օգտագործված նյութը: Այս տեղեկությունները

ունեն կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն և հետագայում կարող են օգտագործվել համեմատական վերլուծությունների համար:

Երրորդ ենթագլուխը նվիրված է թաղման ձևերին և ծեսին: Խիստ դրական հանգամանք է, որ նախքան բուն շարադրանքին անցնելը հեղինակը տեսական մի ակնարկ է կատարում, ինչը դյուրացնում է հետագա ընկալումը: Դիադրման ծեսը քննելիս, Սարատիկյանը ուշադրություն է դարձնում էմբրիոնալ դիրքին, նշելով դրա խորհրդանշական իմաստը: Դիամասնատում ներկայացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում մասնակի դիամասնատման ծեսին, մասնավորապես դեկառնացիային: Ներկայացվում են հուշադամբարանները: Էական է, որ հեղինակը հստակ առանձնացնում է այն չափորոշիչները, որոնք առանձնացնում են կենոտաֆը: Դիակիզումը ներկայացնելիս հեղինակն իրավացիորեն տարբերակում է մարմնի դիակիզումը և դամբարանի կրակով մաքրագործումը: Բացառիկ նշանակություն ունի շան թաղման ներկայացումը:

Երկրորդ գլխում ներկայացվում է թաղման գույքը: Գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից. կավե առարկաներ, մետաղ և քար: Գլխի նախաբանային հատվածում արժևորվում է գույքը որպես թաղման ծիսակարգի կարևոր բաղադրատարր: Այնուհետև վերլուծվում է խեցեղենը, ընդ որում որպես անկասկած դրական հանգամանք պետք է նշել, որ հեղինակը ուշադրություն է դարձնում խեցեղենի պատրաստման տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկություններին: Կարևոր հանգամանք է, որ Անի Սարատիկյանը դիտարկում է խեցեգործական ավանդույթների զարգացումը: Այնուհետև դիտարկվում են խեցեղենի տիպաբանական խմբերը և դրանց զուգահեռները: Խիստ հետաքրքիր է ծորակավոր անոթների և դրանց գործածության եղանակների ներկայացումը: Տիպաբանական շարքում հեղինակն անդրադառնում է նաև մինիատյուր անոթներին:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է մետաղական առարկաներին: Կիրառվում է շատ ճիշտ մեթոդաբանություն, երբ մետաղական առարկաների տարբեր տեսակներ դիտարկվում են իրար, իսկ ամենակարևորը մարդաբանական նյութի համատեքստում: Զուգահեռների համար հեղինակն օգտագործում է ողջ հասանելի նյութը, ինչը մեծացնում է ներկայացվածի արժեքը: Ուշադրության է արժանի հագուստի մետաղական դետալների նկարագրությունը:

Երրորդ ենթագլխում ներկայացվում են քարե առարկաները:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է հասարակական հարաբերությունները: Այս հատվածում հաջորդաբար դիտարկվում են պատմամշակութային համատեքստը, տնտեսության և արհեստներին առնչվող տվյալները, սոցիալական կարգավիճակի ցուցիչները: Այս գլխում հեղինակը փաստորեն ձեռնամուխ է լինում ցանկացած հնագիտական հետազոտության վերջնական փուլին՝ պատմա-հնագիտական վերակազմությանը, օգտագործելով կուտակված տվյալները որպես պատմական և հնագիտական սկզբնաղբյուր: Առաջին ենթագլուխը ներկայացնում է պատմամշակութային համատեքստը: Հեղինակը մանրամասն ներկայացնում է այն գլոբալ փոփոխությունները, որոնք հանգեցրին անցումը երկաթի դարաշրջանին: Հեղինակն իրավացիորեն մատնանշում է այն փոփոխությունները, որոնք հանգեցրին տարածաշրջան՝ Վանի թագավորության ներթափանցումը: Ուշագրավ է այն դիտարկումը, որ մարդաբանական նյութի քանակական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն բավարար էր ռազմական ներուժն ապահովելու համար:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են տնտեսության և արհեստներին առնչվող տվյալները: Կարևոր նշանակություն ունեն Թեղուտի հանքի շահագործմանը վերաբերող տվյալները: Խիստ հետաքրքրական է երրորդ ենթագլուխը, որտեղ ներկայացվում են սոցիալական պատկանելիության ցուցիչները: Մասնավորապես ներկայացվում են զինվորական խավի դամբարաններին բնորոշ իրերը: Շատ կարևոր է հեղինակի այն դիտարկումը, որ դատելով զենքի և զրահի տեսականուց, մշակվածությունից և զարդարանքից, զինվորական խավը բազմաշերտ էր: Խիստ հետաքրքիր է զենքով կանանց թաղումների նկարագրությունները, ինչը կարող է լույս սփռել հասարակության կառուցվածքի վրա:

Շարադրանքը ավարտվում է եզրակացությունների հատվածով: Հեղինակի եզրակացությունները հավաստի են, հիմնավորված և պարունակում են զգալի գիտական նորույթ:

Ատենախոսության գրականության ցանկն ընդգրկում է 392 անվանում գրականություն, որը լիովին արտացոլված է բուն տեքստի գիտական ապարատում: Հաճելի է, որ հեղինակը լայնորեն օգտագործում է դեռևս 19-րդ դարի հրապարակումները, այդ թվում նաև պարբերական մամուլում: Այստեղ պարունակվող երբեմն մեծարժեք տեղե-

կությունները հաճախ անտեսվում են ժամանակակից հետազոտողի կողմից: Հաջորդ դրական հանգամանքը տեսական գրականության առատությունն է, ինչ բուն աշխատանքի հիմնավորվածության ցուցիչ է:

Հավելված 1-ում ներկայացված են համեմատական աղյուսակները. Դամբարանների կոորդինատները, հնագիտական նկարագրությունը (խիստ գովելի է ֆորմալիզացված նկարագրությունը), զարդանախշի տիպաբանությունը և վիճակագրական վերլուծությունն ըստ դաբարանադաշտերի: Այս աղյուսակներն ինքնին հանդիսանում են ինքնուրույն աշխատանք, որը արժանի է հետագա խորացմանը և հրատարակությանը: Առանձին աղյուսակ է ներկայացնում ռադիոածխածնային անալիզի տվյալները: Այնուհետև ներկայացված է մարդաբանական նյութի, գտածոների և դրանց առանձին կատեգորիաների վիճակագրական վերլուծությունը: Ընդհանուր առմամբ այս հատվածում ներկայացված է 69 համեմատական աղյուսակ և 27 գծապատկեր: Այս հավելվածում նաև տեղ են գտել քարտեզները. Թեղուտի հանքավայրի տարածքի հնագիտական հուշարձանների քարտեզները, առանձին հուշարձանների տեղահանույթները և բաարձրությունների քարտեզները (3 քարտեզ, 9 հանույթ):

Հավելված 2-ում ընդգրկված են դամբարանադաշտերի և դամբարանների (78 տախտակ), հայտնաբերված նյութերի (157 տախտակ), նյութերի գծանկարները (186 տախտակ) և դամբարանների չափագրությունները (14 տախտակ):

Հավելվածները կատարված են բարձր մակարդակով, իլյուստրատիվ նյութը լիովին համահունչ է շարադրանքին, դյուրացնելով նրա ընկալումը:

Վերոշարադրյալ անկասկած դրական և գովասանքի աարժանի կողմերի հետ մեկտեղ կան նաև որոշ թերացումներ: Մասնավորապես առկա են սրբագրական և խմբագրական բնույթի թերացումներ: Ճիշտ կլիներ նաև հիշատակելով տարածաշրջանի բնակավայրերը ներկայացնել նրանց անվանումները և, հնարավորության դեպքում, պետական ցուցակներում դրանց դասիչները: Աշխատանքում առկա են որոշ բովանդակային կրկնություններ: Օրինակ՝ ներկայացնելով բնաշխարհագրական համատեքստը, հեղինակն անդրադարձ է կատարում ուսումնասիրության մեթոդներին, որոնք արդեն որոշ չափով ներկայացված են նախաբանում:

Նշվածը բնավ չի ստվերում հեղինակի կողմից կատարված հսկայական աշխատանքը, որը կարևոր ներդրում է հնագիտության ոլորտում: Աշխատանքը լիովին

համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Սեղմագրում թվարկված 9 հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթներն ու ամփոփ շարադրանքը: Գտնում ենք, որ «Շնող գետի ավազանը երկաթի դարում (ըստ հնագիտական նորահայտ տվյալների» ատենախոսության հեղինակ Անի Անդրանիկի Սարատիկյանն արժանի է հայցած Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի մասին էլ միջնորդում եմ գիտական խորհրդին:

Պաշտոնական ընդդիմախոս պ.գ.թ. դոց. Ա. Գնունի

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դոցենտ, պ.գ.թ.
Ա. Գնունու ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

17.07.26թ.